ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 572-Ա **23 սեպտեմբերի 2026 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 1-ին, 2-րդ գլուխների պահանջները

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանին:

23.09.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք.Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2026 թ. նոյեմբերի 23-ի
N572 - Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնը զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույց

1. «Վարդենիկի ԱԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 09.12.2026թ., ժամը՝ 11:00-ին հարցազրույց՝ 11.12.2026թ., ժամը՝ 11:00-ին
2. «Վաղաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 11.12.2026թ., ժամը՝ 15:00-ին հարցազրույց՝ 15.12.2026թ., ժամը՝ 15:00-ին
3. «Երանոսի ԲԱ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 15.12.2026թ., ժամը՝ 11:00-ին հարցազրույց՝ 17.12.2026թ., ժամը՝ 11:00-ին
4. «Ծովակի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 16.12.2026թ., ժամը՝ 11:00-ին հարցազրույց՝ 18.12.2026թ., ժամը՝ 11:00-ին
5. «Գեղհովիտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 21.12.2026թ., ժամը՝ 11:00-ին հարցազրույց՝ 23.12.2026թ., ժամը՝ 11:00-ին
6. «Լիճքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 22.12.2026թ., ժամը՝ 11:00-ին հարցազրույց՝ 24.12.2026թ., ժամը՝ 11:00-ին

7. «Մեծ Մասրիկի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 20.01.2027թ., ժամը՝ 11:00-ին հարցազրույց՝ 22.01.2027թ., ժամը՝ 11:00-ին
8. «Ծովագյուղի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 21.01.2027թ., ժամը՝ 11:00-ին հարցազրույց՝ 25.01.2027թ., ժամը՝ 15:00-ին
9. «Գանձակի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝ 25.01.2027թ., ժամը՝ 09:00-ին հարցազրույց՝ 29.01.2027թ., ժամը՝ 11:00-ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2026-09-23 12:18:06 +04:00
Հաստատված է ԷԱՇՏ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ